20 օգոստոսի 2020 թվականի N 1386 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 1031-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու և գույք ամրացնելու մասին» N 1031-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 1-ին կետում «NN 1 և 2 հավելվածներում» բառերը փոխարինել «N 2 հավելվածում» բառերով.

2) որոշման 4-րդ կետից հանել «N 1 հավելվածում նշված գույքն ամրացնել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը, իսկ» բառերը.

3) որոշման 6-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին,» բառերը.

4) որոշման 7-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և» բառերը.

5) ուժը կորցրած ճանաչել N 1 հավելվածը.

6) որոշման N 2 հավելվածի ցանկը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով՝

«3.	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Թալին	1611716	ԱԱՌԿ «Թալին» վարչական շենք ԱԱՌԿ «Թալին» վարչական շենք	հողամաս			0.7833	68,051,980		68,051,980
				շենք	125.5	1		7,098,834	1,246,072	5,852,762
4.	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Սիսիան	1959361	Ռադիոկայան Ռադիոկայան	հողամաս			0.3820	2,016,960		2,016,960
				շենք	67.68	1		3,184,930	938,417	2,246,513
5.	ՀՀ Արմավիրի մարզ, գ. Ոսկեհատ	1388773	Կառավարման կայան («ՀԱՌՓ 85») Կառավարման կայան («ՀԱՌՓ 85»)	հողամաս			0.6464	26,456,142		26,456,142
				շենք	213.1	1		17,835,583	10,081,288	7,754,295».

7) N 2 հավելվածի «ընդամենը» տողում «10.555.982» թիվը փոխարինել «122.934.634» թվով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման մեջ նշված անշարժ գույքերի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:

3. Սահմանել, որ սույն որոշման մեջ նշված անշարժ գույքերի նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կիրականացվեն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. օգոստոսի 25
Երևան